Հակամարտություններն ու մարդու իրավունքների պաշտպանությունը Հարավային Կովկասում

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Իրավապաշտպան քարտեզի սպիտակ բծերը

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի երկրորդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի մարդու հիմնարար բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ անկախ այն երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, որին պատկանում է անձը: Ապրում է մարդն անկախ երկրում, խնամարկյալ կամ ոչ ինքնավար պետության սահմաններում, թե ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորման տարածքում, պիտի օգտվի մարդու հիմնարար բոլոր իրավունքներից: Ուստի պիտի կարողանա օգտվել նաև իրավունքների պաշտպանության միջազգային գործիքներից: Իրավապաշտպանների ուշադրության կենտրոնում գտնվելու իրավունքը սահմաններ չպետք է ճանաչի: Տրամաբանական է և արդարացի: Մարդը մեղավոր չէ, որ երկիրն ուր ապրում է ինքնիշխան կամ ճանաչված չէ: Սակայն մի բան է վաթսունամյա փաստաթուղթը, այլ բան՝ իրականությունը: Իսկ իրականում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վարույթ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) բնակչի որևէ հայց երբևէ չի ընդունվել: ԼՂՀ որևէ կարգավիճակի դեպքում նրա բնակիչը պիտի կարողանար օգտվել իրավապաշտպան միջազգային գործիքներից, ինչից առ այսօր զրկված են: Ըստ էության, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմներից օգտվելու քարտեզում ԼՂՀ-ն այսօր սպիտակ բիծ է:

Անհրաժեշտ է խթանել ԼՂՀ քաղաքացիների կողմից միջազգային իրավապաշտպան կառույցներին դիմելու գործընթացը: Որքան էլ հակասական հնչի, սրան պետք է աջակցեն առաջին հերթին ԼՂՀ իշխանությունները: Հարկ է իրավապաշտպան կառույցներին ներգրավել ԼՂՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության գործին: Երկրագնդի իրավապաշտպան քարտեզի վրա սպիտակ բծեր չպետք է լինեն: Իսկ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պիտի կրկին պայքարի իր անվտանգության ու աշխարհի քարտեզում իր տեղի համար: Այս անգամ՝ աշխարհի իրավապաշտպան քարտեզի վրա:

Անհակադրելիների հակադրումը

Հակամարտություններից տառապող տարածաշրջանում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները չեն սահմանափակվում միայն միջազգային մեխանիզմների անմատչելիությամբ: Մարդու իրավունքների պաշտպանության յուրաքանչյուր առանձին կամ համակարգային խնդրի բարձրաձայնումը տարիներ շարունակ համարվել է մարտահրավեր՝ պետականությանն ու անվտանգությանը: Այսպես, հարևան Վրաստանում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները հաճախ վերածվում են «լրտեսական կրքերի»: Վրաց-օսական, վրաց-աբխազական, այնուհետև նաև ռուս-վրացական չլուծված հակամարտությունների պարագայում վրաց իշխանությունները իրավապաշտպան գործունեությունը վտանգավոր են համարում: Հայաստանում նույնպես նման մոտեցման արձագանքները չեն մարել: Այսպես, ժամանակին ազգային փոքրամասնությունների իրավունքների խնդիրները չէին բարձրաձայնվում հենց «5-րդ շարասյուն» պիտակից խուսափելու նկատառումով: Երեք երկրների զինված ուժերում իրավախախտումների դեպքերը նույնպես քննվել են այս լույս ներքո:

Խնդրի էությունը վերածվում է մի կողմից՝ մարդու իրավունքների, մյուս կողմից՝ ազգային անվտանգության եզրույթների հակադրմանը, ինչը սկզբունքորեն անընդունելի է: Չէ՞ որ մեր ժամանակներում պետությունը նախ և առաջ մարդու իրավունքների պաշտպանության գերագույն ազգային ինստիտուտն է: Պետության առաջնային կոչումը մարդու՝ բոլորի և յուրաքանչյուրի հիմնարար իրավունքերի պաշտպանությունն է: Ուրեմն անհնար է, իրավունքների պաշտպանության խնդիրները բարձրաձայնելով, մարտահրավեր նետել այդ խնդիրները լուծելուն կոչված գործիքին:

Հատկանշական է, որ խորհրդային պետության կազմաքանդումն ընթացավ ոչ թե հանուն մարդու իրավունքների պաշտպանության, այլ առավելապես ի շնորհիվ ազգային ինքնագիտակցության վերածննդի: Հետևաբար հակամարտությունները հենց ազգային ինքնորոշման հողի վրա էին, ուստի զարմանալի չէ, որ մարդու իրավունքների պաշպանության խնդիրները արհեստականորեն հակադրվում էին ազգային շահերին, ինչն ինքնահոսով շարունակվում է նաև այսօր: Մինչդեռ, մարդու իրավունքները լավագույնս պաշտպանված են հենց ամուր ազգային պետության մեջ, իսկ ազգային շահերը լավագույնս պաշտպանում է այն հասարակության անհատը, ուր պաշտպանված են նրա իրավունքները:

Այս առումով, կարևորվում է ինչպես Հայաստանի, այնպես էլ ԼՂՀ բնակիչների քաղաքացիական կրթության և իրավագիտակցության բարձրացման խնդիրը: Ընդ որում, ԼՂՀ-ում քաղաքացիական կրթության և իրավապաշտպան գործունեության բացերը նախ և առաջ հայաստանյան քաղաքացիական հասարակության կառույցների թերացումներն են: Հայաստանյան իրավապաշտպանները պիտի մեծ թափով լծվեն այս գործին: Հայաստանի իշխանությունների ակտիվ աջակցությամբ: Չէ՞ որ արևմտյան իրավապաշտպանները և իշխանությունները սեփական երկրում շատ հաճախ կատաղի ընդդիմախոսներ են, սակայն այլ ժողովուրդներին աջակցելիս գործում են ձեռք-ձեռքի: Հայաստանյան իրավապաշտպանները

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

պետք է ակտիվորեն համագործակցեն նաև ազերի գործընկերների հետ՝ Ադրբեջանում բնակվող հայերի իրավունքների պաշտպանության խնդրում: Այս առումով անելիք ունեն նաև միջազգային իրավապաշտպան կառույցները: Ժամանակն է, որ հարևան երկրի տարածքում վերանան իրավապաշտպան սպիտակ բծերը:

Իրավունքների սահմանափակումն ու պաշտպանությունը

Նախորդ դարի 90-ականներին ձևավորվեցին իրավախախտումների, այդ թվում՝ ընտրական իրավախախտումների մի շարք ինստիտուտներ, որոնք որոշ փոփոխություններով գործում են առ այսօր: Դրանք իրենց ողջ արատավորությունը դրսևորեցին նախ 96-ին, ապա նաև՝ յուրաքանչյուր հաջորդ ընտրաշրջանում: Ընդ որում, Հայաստանում մարդու իրավունքների զանգվածային խախտումները պարբերաբար հիմնավորվել և անգամ արդարացվում են չլուծված հակամարտությամբ, և պատերազմական իրավիճակով: Եվ կրկին, նման մոտեցումը ցավալիորեն իրար դեմ է հանում միմյանց բնավ չհակասող մեր կարևորագույն արժեքները. հայրենասիրությունն ու ազատամտությունը, ազգասիրությունն ու իրավապաշտությունը: Այն, որ այս արժեքները իրար չեն հակասում, այլ լրացնում են միմյանց, լավագույնս ապացուցում է պատերազի անմիջական վտանգի տակ ապրող Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը: Այստեղ իրավախախտումները բնավ ավելին չեն քան «մայրցամաքային» Հայաստանում: ԼՂՀ-ում վիճակը թերևս բարվոք է: Հետպատերազմյան տարիներին այստեղ վերացվեցին նաև իրավաչափ սահմանափակումները:

Հակամարտությունների ժամանակ հաճախ անհրաժեշտ է լինում սահմանափակել քաղաքացիների առանձին իրավունքները: Նման պարագայում ծագում է իրավունքների սահմանափակման համաչափության-իրավաչափության խնդիրը, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակների օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը: Սակայն ամենից առավել մտահոգիչ է չսահմանափակված իրավունքների խախտման խնդիրը: Նախորդ դարի 90-ականներին պատերազմական իրավիճակում գտնվող Հայաստանի համար տրամաբանական կլիներ առանձին իրավունքների համաչափ սահամանափակումը օրինական՝ իրավաչափ ճանապարհով: Սակայն այդ չարվեց: Փոխարենը լայն տարածում ստացան չսահմանափակված իրավունքների խախտումները: Թերևս այդ ժամանակաշրջանում էլ հենց հիմք դրվեց իրավունքների հանդեպ հասարակության ներկա՝ որոշակի ցինիզմով աչքի ընկնող վերաբերմունքին: Մինչդեռ, հենց այս վերաբերմունքն է իրավական պետության արմատն ու բունը կրծող որդը:

Լուծումն իրավական պետություն ձևավորելն է՝ սկսելով առանձին իրավունքներից, բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանությանը կոչված հանրային և հասարակական կառույցների հեղինակությունը, ոչնչացնելով անվստահություն սերմանող ցինիզմի որդը:

Բանակ. ուր պետության ձեռքերն ամենահաս են ու ամենապաշտպան

Չլուծված հակամարտությունն ազդեցություն է գործում նաև զինծառայողների իրավունքների պաշտպանության վրա: Խնդիրները չեն բարձրաձայնվում, սակայն չեն էլ վերանում: Խնդրահարույց են բանակում ոչ կանոնադրային հարաբերությունների պատճառով իրավախախտումները: Նաև՝ մահվան ելքով: Եվ սա այն դեպքում, երբ բանակն այն ինստիտուտն է, ուր զինծառայողները պետության բացարձակ հսկողության տակ են: Քաղաքացին արդարացիորեն ակնկալում է, որ իր զավակի իրավունքները պետության բացարձակ հսկողության տակ գտնվող կառույցում պիտի որ ավելի լավ պաշտպանված լինեն, քան հասարակության մեջ ընդհանրապես: Հաճախ լսում ենք. «Ինչպիսին հասարակությունն է, այնպիսին էլ՝ բանակն է»: Բայց չէ՞ որ հասարակության մեջ պետության դերը սահմանափակ է, իսկ բանակում պետության դերը բացառիկ է ու բացարձակ: Ավելի ճիշտ չէ արդյո՞ք. «Ինչպիսին բանակն է, այնպիսին էլ պետության կողմից իրավունքների պաշտպանության մակարդակի առավելագույն չափն է»: Ըստ էության՝ բանակում յուրաքանչյուր զոհի համար պատասխանատու է հենց պետության ինստիտուտը: Ի վերջո, բանակը միջավայր է, ուր մարդու առանձին իրավունքները սահմանափակված են օրենքով: Ուրեմն հարյուրապատիկ արդարացի է ակնկալել, որ սահմանափակ իրավունքները չխախտվեն ու սրբորեն պաշտպանվեն:

Պատասխանատվության ողջ բեռը ներկայում կրում է պետությունը: Մինչդեռ, բանակում քաղաքացիական վերահսկողության և մոնիտորինգի ինստիտուտի կայացման պարագայում կձևավորվեր նաև մարդու իրավունքների պաշտպանության գործում հասարակական ինստիտուտների պատասխանատվության խնդիրը: Սակայն նման մոնիտորինգն արդյունավետ իրականացնելու կարող կառույցներ այսօր նույնպես չունենք: Անհրաժեշտ է զարգացնել դրանք:

Համառոտագիրը մշակվել է 2010թ-ի ապրիլի 1-ին կայացած՝ «Մարդու իրավունքներ և չճանաչված պետություններ. ազգային փոքրամասնությունները որպես հակամարտությունների և քաղաքական շահերի առարկա» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր «Սևծովյան տարածաշրջանի խաղաղաշինական ցանցի» աջակցությամբ: